

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱԶԳԵՆ

Ես օրոցքում սովորեցի
Չավք-թռչնի լեզուն,
Ջրի՛, հողի՛ և աստղերի՛
Գաղտնիքը խոսուն:

Մանկուց միտքս գրին թռավ,
Գրին հայրենյաց:
Ծիծաղ-ձայնս մեղուն տարավ,
Եփեց անուշ հաց:

Թիթեռնիկը լացս կարդաց
Աստղով երկրնի:
Ճաշակեցի կաթը արդար
Նախնյաց բառ-բանի:

Ոտաբոբիկ՝ հանգույն առվի
Անցա քար ու ժայռ,
Խոր հեգեցի խոտի՛, հովի՛
Թախիծը անբառ:

Ու շաղ տվի արցունք, երազ,
Կարոտներ՝ թեղ-թեղ,
Բայց սերն անհոգ խնդաց վրաս,
Ես՝ մանուկ անմեղ:

Եկա իմ որբ մանկությունից՝
Մի ծաղկաքուլա,–
Ես չկորա, այլ գտա ինձ,
Էլ, մայր ի՛մ, մի՛ լա:

Չիմա հասկ-հասկ ժողվում եմ ես,
Կապում բերքս–խուրձ.
– Չայրական տուն, բերում եմ քեզ
Անարատ մի հունձ:

ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐԸ

...Այնտեղ Արաքսի խշշուն շամբերում,
Ուր որ աշուն է, Սեպտեմբեր է հով...
Սեզի՛, եղեգնի՛ արմատ-բներում,
Ապրում եմ նրանք ընտանիքներով:
Այնժամ եմ հողի երեսը ելնում,
Իրենց խմբերով, էգեր ու արու...

Երբ մեղրամիս է ու բեղմնավորում,—
Արևի տակ են սիրում իրարու:
Ու... ձու են դնում մայրերը իսկույն,
Ապա մահանում ի սեր ձագերաց,
Իսկ հայրիկները թռչում են, գնում,
Տեսակի բախտը չի հուզում նրանց:
Մայրերն են տալիս գույն ու ներկ միայն,
Մայրերը լեցուն գաղտնիքով Աստծո,—
Նրանք մեռնում են, որ զարթնած ետ գան,
Դառած մունիաներ բորբ ու բրածո:
Որդից իմ նախնիք... կրակ են քամել,
Ներկն այդ ստացել, եզակի—միակ,—
Այդ նույն եղեգնից, Վահագնին հուրիներ,
Երկիրն իմ երկնեց— խարտյաշ պատանյակ:
Զարմանք է, այո՛, գորգերի վրա,
Եվ հյուսվածքներում, օ՛, հազար ու մի...
Բոսոր տևում է ծաղկումը նրա,
Որին չի քանդի ոչ ջուր, ոչ քամի:
Ասես երեկ էր, վրձինը ձեռքին,
Հակված մատյանին մի դպիր Պիծակ...
Այնինչ անցել են դարեր տակավին,
Շնչում են, ապրում ծաղիկ ու որձակ:
Գոռ արքաների քյոշք—սարայներում,
Մագաղաթների էջերում զառամ...
Այս հին աշխարհի բոլոր ծագերում,
Գույնն այդ վառվում է, անմա՛շ—անթառա՛մ:
Ոչ մի նվաճո՛ղ, ոչ մի թու՛րք—թաթա՛ր,
Դեռ չի հանգցրել բոցն այդ կրակված,
Որ շողշողում է այսպես անդադար,
Ժամանակների փոշուց մաքրված:
Հայ բնութքից է նա աշխարհ մտել,
Մեր ցորենի հացի հունդն է բուրյան...
Շատ ազգերի ենք մենք գույն—համ տվել,
Ինչպես ծիրանե Կարմիրը Որդան: